յերից։ Իր զեկուցումներից մեկի մեջ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը գրում էր Մինաս վարդապետին՝ «Մեր խեղճ ողորմելի Հայոց ազկրն տիր շատ նեղութիւնումն այ։ Գոխտան գավառ՝ որ ղզլբաշն այ թալանում և կերպ կերպ փսլինքանիան բերում գլուխներանին, որ նման չի ամենան խօսկն գրել, քաշկայ թէ ես էլ մեռած լինի՝ որ չի լսէի։ Ղափան էլ բի դաստուր որ նեղութիւնումն ան՝ .... Ղզլբաշն ու օսմանլուն նոցա արընին յետնէն ան... Յավատայ, որ հայքն վարթարաֆ ելավ քանի պատճառիվ։ Ա. ասում են՝ թէ հայքն թամամ ջառթիլ պիտի, որ էս երկիրն վարթարաֆ արարին. էսպէս որ ըռուստն բերեն կոխեցին Ղզլբաշի երկիրն... Գառան պես մոլորվել ան. չնի թէ գայլն յափըշտակի, վրայ նոցայ՝ դ. կողմն թշնամին բռնել այ»։ «Խաբար արեկ թէ Ղզլբաշն գնացել այ Ղափանստան այ մտել։ Ղափանայ խայերին որշանք սիլայ, բուսաթ, բարութ, գուլայ որ ելէլ այ՝ յինք ան առել»[16]։

Ոչ միայն Կապանը, այլև Սիսիանը դարձավ մշտական հարձակումների ասպարեզ թե՛ պարսից ու օսմանցոց կանոնավոր զորքերի և թե՛ մոլեռանդ հրոսակների կողմից։ Բնակչությունը տուժում էր ոչ միայն այս ավերմունքների հետևանքով, այլև սկսված արտագաղթի պատճառով, որին առանձնապես խրախույս էր լինում ռուսական կառավարությունը՝ կամենալով իր գրաված մերձկասպյան ծովեզրյա շրջանը լցնել հայ արհեստավոր և գյուղացի աշխատավորությունով, ոչ պակաս նաև զինվորական ունակություններ ունեցող հայ տարրերով։ Ղարաբաղի, ընդհանրապես և մասնավորապես Կապանի ու Սիսիանի հայությունը ապստամբության շարժումների ժամանակ ապացուցել էր իր բարձր ռազմունակությունը։ Այն բոպեից ի վեր, երբ պարզվեց, որ ռուսական կառավարությունը չի կարող նոր զինված ուժեր փոխադրել նորանվաճ Կասպից երկրները, մանավանդ որ օսմանցոց հետ կապված պայմանագրի համաձայն ռուսական կառավարությունը հրաժարվել էր հայ և վրացի ապըստամբներին օգնելուց, արդեն ինքը Պետրոս Մեծը, իսկ նրա մահից հետո՝ Եկատերինա I-ը ամեն կերպ աշխատում էին այդ կողմերի հայերին գաղթեցնել իրենց գրաված գավառները, չանսալով այդ ծրագրի դեմ մելիքների կողմից դժվարությունների մասին ներկայացրած առարկություններին[17]։

Սիսիանն առանձնապես վնասվում էր Նախիջևանի կողմից ուղղված վրեժխնդիր հարձակումներից[18] և սկսված արտագաղթից։ Այդ է պատճառը, որ հաջորդ տասնամյակներում, երբ Փանահ-խանը ամուր նստեց Շուշիում և ամրանալով այդտեղի «Ղալայում»— Ղարաբաղի մելիքների թիկունքում՝ հիմնեց Ղարաբաղի խանությունը, նա մեծ արգելքների չհանդիպեց իր խանության սահմանները Ղարաբաղի լեռնաշղթայից դեպի հարավ ընդարձակելու և իրեն ենթարկելու համար Սիսիանի և Տաթևի՝ Բուն Զանգեզուրի մելիքներին, որոնց

---

[16] «Կռունկ հայոց աշխարհի», 1866 թ., էջ 207—209։ Հմմտ. Էջոե Գ. Ա., նշված աշխ., մաս LXIV։ Հովհաննիսյան Աշ., Պետրոս դի Սարգիս Գիլանենց, «Արարատ», 1916, էջ 105—128։

[17] Էջոե Գ. Ա., նշված աշխ., էջ 421։

[18] 1749 թ. Նախիջևանի Հէյդար խանը սպանում է ուրիշ իշխանների հետ նաև Անգեղակոթի Մելիք-Սադաթին (Մ. Զամչեան, Պատմություն հայոց, հ. Գ, էջ 843), իսկ դրանից մի տարի առաջ Նախիջևանի խանի մարդիկ հասած են եղել մինչև Տեղ գյուղը՝ պահանջելով զինի և այլ տուրք։ Տեղի Մելիք Բարխուդարը, հրաժարվելով այդ պահանջը կատարելուց՝ հարկադրված է եղել զենքով դուրս գալու նրա հրովարտակների դեմ։ Ընդհարման մեջ ինքն ու իր եղբայրը սպանվում են, երկուսի գլուխները ներկայացնում են խանին։ Տե՛ս Ե. Լալայեան, Զանգեզուր, էջ 12։ Տապանաքարը մակագրությամբ գտնվում է Խնձորեսկի անապատում։ Այնուհետև Տեղի-ինչպես և Խնձորեսկի, մելիքները գերադասել են մտնել Փանահան խանի թևի տակ։